Ծուշանիկ Կուրղինյան

Դու դեռ քնած ես . . .

Դու դեռ քնա՞ծ ես դեռ խարխափո՞ւմ ես
Ճահճացած կյանքիդ նեխող տիղմի մեջ,
Գիտակից կռվին մինչ այժմ անտես,
Չզգացի՞ր ուժը իղձերի անշեջ:
Դու դեռ պահում ես հոգու ծուլության,
Անշահ ու անշարժ հանգստի գրկում,
Կամ թե չէ անարգ ստոր ճոխության
Տմարդ հաճույքի բույրն ես ծծում:
Դու դեռ ապրում ես խղճալի գերի
Անմիտ կարգերից ձեռք, ոտք շղթայված,
Գործնական կյանքում դու, ողոմելի՛,
Մի անպետք փալաս ձգած, մոռացած:
Դեռ պարբերաբար ծնում ես մարդիկ՝
Ում բացի կաթից բան չունես տալու՝
Ինչպես անասուն, անբան ու անմիտ,
Անկատար զանգված, ստրուկ ու հլու:
Արթնացիր, թշվա՛ռ, դուրս արի շուտով,
Գարշ վախկոտության պատյանի միջից՝
Որտեղ ապրել ես գերի դարերով՝
Կալած ու կապված դրսի աշխարհից:
Արթնացի՛ր, թշվա՛ռ . . . ձայն տուր ամենքին՝
Ով որ հոգնել է բռնության գրկում,
Ում սրտում գեթ մի կաթիլ մարդկային

Արժանավորության իղձն է փլփլում . . .
Արթնացի՛ր, թշվա՛ռ, կյանքի հեղեղուն
Գոռ ալիքներին հանձնվիր համարձակ՝
Այնտեղ է կյանքը, այնտեղ է անհուն
Վեհ իդեալների կռիվ հաղթանակ . . .

1906 թ